Հավելված N 1
ՀՀ կառավարության 2014 թվականի
մարտի 6-ի N 241 - Ն որոշման

Չ Ա Փ Ո Ր Ո Շ Ի Չ Ն Ե Ր

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ, ՄՐՑԱՇԱՐԵՐԻ, ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ

1. Հանրակրթության ոլորտում իրականացվող կրթական բնույթի առարկայական մրցույթները, մրցաշարերը, օլիմպիադաները՝ հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների բացահայտմանը, գնահատմանն ու զարգացմանն ուղղված, տարբեր բովանդակությամբ, մեկ կամ մի քանի փուլով կազմակերպվող միջոցառումներ են:

2. Հանրակրթության ոլորտում իրականացվող կրթական բնույթի առարկայական մրցույթների, մրցաշարերի, օլիմպիադաների չափորոշիչներն են՝

1) վերջին 3 տարվա ընթացքում հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների առնվազն 10000 և ավելի սովորողների մասնակցություն՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքից.

2) հանրակրթության ոլորտում իրականացվող կրթական բնույթի առարկայական մրցույթների, մրցաշարերի, օլիմպիադաների ծրագրային բովանդակության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված՝ հանրակրթության պետական չափորոշչին և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված՝ առարկայական չափորոշիչներին համապատասխանություն.

3) կրթական միջավայրի՝ անհրաժեշտ ուսումնաօժանդակ նյութերով, խրախուսման միջոցներով ապահովում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

14_0241

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2014 թվականի
մարտի 6-ի N 241 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԸ, ՄՐՑԱՇԱՐԵՐԸ, ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ

1. Հանրակրթության ոլորտում իրականացվող կրթական բնույթի առարկայական մրցույթներ, մրցաշարեր, օլիմպիադաներ (այսուհետ՝ մրցույթ, մրցաշար, օլիմպիադա) անցկացնող կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) դիմում է կրթության պետական կառավարման լիազորված մարմին (այսուհետ՝ նախարարություն)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 241-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) 1-ին կետով սահմանված չափորոշիչներին համապատասխան ճանաչում և երաշխավորություն ստանալու համար:

2. Կազմակերպությունը մրցույթի, մրցաշարի, օլիմպիադայի անցկացումից առնվազն մեկ ամիս առաջ դիմում է նախարարություն և ներկայացնում՝

1) մրցույթի, մրցաշարի, օլիմպիադայի ծրագիրը, որում ներկայացված են մրցույթի, մրցաշարի, օլիմպիադայի բովանդակությունը, նպատակները, իրականացման սկզբունքները, ակնկալվող արդյունքը.

2) մրցույթի, մրցաշարի, օլիմպիադայի կազմակերպման պայմանները, ժամանակացույցը, կանոնները (կանոնադրությունը).

3) մրցույթի, մրցաշարի, օլիմպիադայի՝ նախորդ երեք տարվա մասնակիցների թվի մասին տեղեկատվություն.

4) մրցույթի, մրցաշարի, օլիմպիադայի անցկացման ծախսերի նախահաշիվը, ինչպես նաև նախորդ երեք տարվա մրցույթի, մրցաշարի, օլիմպիադայի ավարտական և

ամփոփիչ փուլից հետո՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ծախսերը հիմնավորող անհրաժեշտ փաստաթղթերի մասին ամփոփ տեղեկանք:

3. Նախարարությունը դիմումը քննության է առնում մեկամսյա ժամկետում:

4. Որոշման 1-ին կետով սահմանված չափորոշիչներին համապատասխանելու դեպքում մրցույթը, մրցաշարը, օլիմպիադան ճանաչվում և երաշխավորվում են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով, որի մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացվում է կազմակերպությանը:

5. Որոշման 1-ին կետով սահմանված չափորոշիչներին անհամապատասխանության դեպքում նախարարությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ մերժման մասին տեղեկացնում է կազմակերպությանը՝ պատճառաբանված հիմնավորմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ